3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«07» Հոկտեմբերի 2023 **թվականի** N2794-Ա

2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2-ԻՆ ՏՐՎԱԾ №87/20 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Գարեգին Հրաչյայի Կարապետյանին Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկ փողոց №48/1 հասցեում սպասարկման մասով բնակելի տան, արտաքին աստիճանների ու հարթակի նոր կառուցման համար 2020 թվականի սեպտեմբերի 2-ին տրվել է №87/20 շինարարության թույլտվությունը: Ըստ շինարարության թույլտվության շինարարության տևողությունը սահմանվել է 20/քսան/ ամիս:

Սահմանված ժամկետում շինարարական աշխատանքները չեն ավարտվել, և կառուցապատողը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողությունը երկարաձգելու 11/տասնմեկ/ ամսով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածով, հիմք ընդունելով կառուցապատողի դիմումը և Գյումրու համայնքապետարանի կողմից ընդունված վարչական վարույթի արձանագրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. 2020 թվականի սեպտեմբերի 2-ին տրված №87/20 շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողության ժամկետը երկարաձգել 11/տասնմեկ/ ամսով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

06.11.2023

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ի Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«07» նոյեմբերի 2023 թվականի №2793Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՂՈՒԿԱՍՅԱՆ ՓՈՂՈՑ, 161/2 ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԻՆ ԿԻՑ ԳՏՆՎՈՂ 11,3 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՈՒ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ 7,59 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հոկտեմբերի 31-ի №2712–Ա որոշումը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Ղուկասյան փողոց, 161/2 հասցեի ավտոտնակին կից գտնվող 11,3 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասին և դրա վրա ինքնակամ կառուցված ու օրինական ճանաչված 7,59 քառակուսի մետր արտաքին մակերեսով շինությանը տրամադրել հասցե՝

ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ղ. Ղուկասյան փողոց, 169/10 շինություն

06.11.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«07» նոյեմբերի 2023 թվականի № 2792Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՂՈՒԿԱՍՅԱՆ ՓՈՂՈՑ, 161/2 ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԻՆ ԿԻՑ ԳՏՆՎՈՂ 2,6 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՈՒ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ 2,6 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 25-ի №2142–Ա որոշումը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Ղուկասյան փողոց, 161/2 հասցեի ավտոտնակին կից գտնվող 2,6 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասին և դրա վրա ինքնակամ կառուցված ու օրինական ճանաչված 2,6 քառակուսի մետր արտաքին մակերեսով շինությանը տրամադրել հասցե՝

ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ղ. Ղուկասյան փողոց, 169/11 շինություն

06.11.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«07» նոյեմբերի 2023 թվականի №2791-Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂՈՒ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 283,57 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-1210-0084) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղու հարևանությամբ գտնվող 283,57 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-1210-0084) տրամադրել հասցե՝

ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Թբիլիսյան խճուղի, 5/1 հողամաս

06.11.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» Հոկտեմբերի 2023 թվականի N 2790-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏԵՐՅԱՆ ՓՈՂՈՑ 108/4 ՀԱՍՑԵԻ ԽԱՆՈՒԹԻ 2-ՐԴ ՀԱՐԿԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Վահան Տերյան փողոց 108/4 հասցեի խանութը ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացիներ Արթուր Սերյոժայի Մկրտչյանին և Գայանե Օնիկի Նալբանդյանին (հիմք անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 08042019-08-0018 վկայական):

Քաղաքացի Արթուր Սերյոժայի Մկրտչյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրեն և Գայանե Օնիկի Նալբանդյանին պատկանող Գյումրի քաղաքի Վահան Տերյան փողոց 108/4 հասցեի խանութի 2-րդ հարկի՝ 43,52 (քառասուներեք ամբողջ հիսուներկու հարյուրերորդական) և 5,85 (հինգ ամբողջ ութսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսներով սենքերի գործառական նշանակությունները, որպես բնակելի տուն փոփոխելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառական նշանակությունը փոփոխելու կարգի» և հիմք ընդունելով քաղաքացի Արթուր Սերյոժայի Մկրտչյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի հոկտեմբերի 12-ին N 22031 թվագրմամբ).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Փոփոխել Գյումրի քաղաքի Վահան Տերյան փողոց 108/4 հասցեի խանութի 2-րդ հարկի՝ 43,52 (քառասուներեք ամբողջ հիսուներկու հարյուրերորդական) և 5,85 (հինգ ամբողջ ութսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսներով սենքերի գործառական նշանակությունները, որպես բնակելի տուն:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում իրավական ակտի ընդունման մասին Արթուր Սերյոժայի Մկրտչյանին և Գայանե Օնիկի Նալբանդյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:
3. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

06.11.2023

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» Նոյեմբերի 2023 **թվականի** N 2789-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՂՅՈՒՍԻ ՓՈՂՈՑԻ N 25/1 ՀԱՍՑԵԻ 19.68 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Աղյուսի փողոցի N 25/1 հասցեի 19.68 (տասնինն ամբողջ վաթսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի, ներառված է բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողերի ցանկում:

Նշված տարածքում կառուցապատում իրականացնելու նպատակով կարիք է առաջացել փոփոխելու հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Աղյուսի փողոցի N 25/1 հասցեի 19.68 (տասնինն ամբողջ վաթսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակությունից փոփոխել հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

07.11.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» Նոյեմբերի 2023 **թվականի** N 2788-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԲՈՒԼՎԱՐԱՅԻՆ ՓՈՂՈՑԻ N 40/1 ՀԱՍՑԵԻ 827.32 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Բուլվարային փողոցի N 40/1 հասցեի 827.32 (ութ հարյուր քսանյոթ ամբողջ երեսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի, ներառված է բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողերի ցանկում:

Նշված տարածքում կառուցապատում իրականացնելու նպատակով կարիք է առաջացել փոփոխելու հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Բուլվարային փողոցի N 40/1 հասցեի 827.32 (ութ հարյուր քսանյոթ ամբողջ երեսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակությունից փոփոխել բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

07.11.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» Հոկտեմբերի 2023 թվականի N 2787Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ՍՅՈՒԶԱՆՆԱ ՍՈՒՐԵՆԻ ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 161-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերով, ցանկի 16-րդ կետով և հիմք ընդունելով Սյուզաննա Սուրենի Վարդևանյանի 2023 թվականի նոյեմբերի 6-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի պետ Սյուզաննա Սուրենի Վարդևանյանին տրամադրել 2023 թվականի ամենամյա լրացուցիչ արձակուրդը՝ 2023 թվականի նոյեմբերի 7-ից:
2. Ամենամյա լրացուցիչ արձակուրդի տևողությունը 4 աշխատանքային օր՝ 2023 թվականի նոյեմբերի 7-ից 10-ը ներառյալ:
3. Ամենամյա լրացուցիչ արձակուրդի ընթացքում Սյուզաննա Սուրենի Վարդևանյանի ծառայողական պարտականությունների կատարումը վերապահել նույն բաժնի գլխավոր մասնագետ Լիանա Աշոտի Սարգսյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սյուզաննա Սուրենի Վարդևանյանին և Լիանա Աշոտի Սարգսյանին պատշաճ կարգով հրապարակման պահից:

06.11.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ
Հեռ. (+374 312) 2-22-001; Ֆաքս (+374 312) 3-26-0
Էլ. փոստ gyumri@gyumri.ar

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԱՊԵՏԻ ՂԱԶԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«06»«Նոյեմբերի»2023 թվական N 2786 – Ա

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար Վարդգես Սամսոնյանս 2023 թվականի նոյեմբերի 1-ին ժամը 11:15-ին Գյումրի քաղաքում, համայնքապետարանի վարչական շենքում <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> ենթակետի հիմքով հարուցված և իրականացված դռնբաց վարչական վարույթի ընթացքում, քաղաքացի՝ Հարություն Կարապետի Ղազարյան (հասցե՝ ք.Գյումրի, Ղորղանյան փ., 168 շենք) բացակայությամբ, գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները պարզեցի.

2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

Քաղաքացի՝ անշարժ գույքի հարկի պարտավորությունները Գյումրի համայնքի բյուջեի նկատմամբ առաջացել է անշարժ գույքի 2010-2020թթ. չվճարված հարկից (հիմք՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժնի կողմից տրամադրված N 296828362040152922 տեղեկանքը):

Վճարման ենթակա գումարը 21.06.2023 թվականի դրությամբ կազմել է անշարժ գույքի հարկի գծով ընդամենը՝ 65.554 (վաթսունհինգ հազար հինգ հարյուր հիսունչորս) ՀՀ դրամ:

3. ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն՝ հարկային օրենսգրքի՝ (այսուհետ՝ Օրենսգիրք) 224-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար սույն բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեությունից

Օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք, բացառությամբ պետական մարմինների, համայնքային կառավարչական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև բազմաբնակարան բնակելի շենքի բնակարանների, ոչ բնակելի տարածքների, բազմաբնակարան բնակելի շենքում տեղակայված՝ հասարակական, արտադրական նշանակության շինությունների, ավտոտնակների (ավտոկայանատեղիների, ավտոհանգրվանների) սեփականատերերին՝ բազմաբնակարան բնակելի շենքի սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ (այդ թվում՝ շենքի տակ գտնվող)՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող հողամասի և ընդհանուր օգտագործման տարածքների մասով:

Օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի <<բ>> ենթակետի համաձայն՝ Օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի՝ հարկային պարտավորությունը Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված վերջնաժամկետներում չկատարվելու կամ մասնակի կատարվելու դեպքում հարկային մարմինը, իսկ տեղական հարկերի ու տեղական վճարների մասով՝ տեղական ինքնակառավարման մարմինը իրավասու են Օրենսգրքի 19-րդ բաժնով սահմանված կարգով ձեռնարկել հարկային պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներ; <<Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն, համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

4)տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարվող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Նկատի ունենալով վերոգրյալը և ղեկավավելով Օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 28–րդ հոդվածի 1–ին, 4–րդ մասերի, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Քաղաքացի՝ Հարություն Կարապետի Ղազարյանից հօգուտ՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի գանձել 65.554 (վաթսունհինգ հազար հինգ հարյուր հիսունչորս) ՀՀ դրամ
2. Քաղաքացի՝ Հարություն Կարապետի Ղազարյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Հարություն Կարապետի Ղազարյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշումը <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով ենթակա է հարկադիր կատարման՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

03.11.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ
Հեռ. (+374 312) 2-22-001; Ֆաքս (+374 312) 3-26-0
Էլ. փոստ gyumri@gyumri.ar

ՈՐՈՇՈՒՄ

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՇՈՏ ԹԵԼՄԱՆԻ ՄԽԻԹԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«06» Հոկտեմբերի **2023 թվական N** 2785 **– Ա**

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար Վարդգես Սամսոնյանս 2023 թվականի հոկտեմբերի 31-ին ժամը 11:15-ին Գյումրի քաղաքում, համայնքապետարանի վարչական շենքում <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> ենթակետի հիմքով հարուցված և իրականացված դռնբաց վարչական վարույթի ընթացքում, քաղաքացի՝ Աշոտ Թելմանի Մխիթարյան (անձ. AK0210773 ՀԾՀ՝ 1408670305, հասցե՝ ք.Գյումրի, Շահումյան 188ա փ.,27բն.) բացակայությամբ, գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները պարզեցի.

2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

Քաղաքացի՝ Աշոտ Թելմանի Մխիթարյանի անշարժ գույքի հարկի պարտավորությունները Գյումրի համայնքի բյուջեի նկատմամբ առաջացել է անշարժ գույքի 2016-2020թթ. չվճարված հարկից (հիմք՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժնի կողմից տրամադրված N 296830674683123858 տեղեկանքը):

Վճարման ենթակա գումարը 18.07.2023 թվականի դրությամբ կազմել է անշարժ գույքի հարկի գծով ընդամենը՝ 174.072 (հարյուր յոթանասունչորս հազար յոթանասուներկու) ՀՀ դրամ:

3. ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն՝ հարկային օրենսգրքի՝ (այսուհետ՝ Օրենսգիրք) 224-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար սույն բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեությունից

Օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք, բացառությամբ պետական մարմինների, համայնքային կառավարչական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև բազմաբնակարան բնակելի շենքի բնակարանների, ոչ բնակելի տարածքների, բազմաբնակարան բնակելի շենքում տեղակայված՝ հասարակական, արտադրական նշանակության շինությունների, ավտոտնակների (ավտոկայանատեղիների, ավտոհանգրվանների) սեփականատերերին՝ բազմաբնակարան բնակելի շենքի սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ (այդ թվում՝ շենքի տակ գտնվող)՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող հողամասի և ընդհանուր օգտագործման տարածքների մասով:

Օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի <<բ>> ենթակետի համաձայն՝ Օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի՝ հարկային պարտավորությունը Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված վերջնաժամկետներում չկատարվելու կամ մասնակի կատարվելու դեպքում հարկային մարմինը, իսկ տեղական հարկերի ու տեղական վճարների մասով՝ տեղական ինքնակառավարման մարմինը իրավասու են Օրենսգրքի 19-րդ բաժնով սահմանված կարգով ձեռնարկել հարկային պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներ: <<Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն, համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

4)տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարվող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Նկատի ունենալով վերոգրյալը և ղեկավավելով Օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 28–րդ հոդվածի 1–ին, 4–րդ մասերի, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Քաղաքացի ՝ Աշոտ Թելմանի Մխիթարյանից հօգուտ՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի գանձել 174.072 (հարյուր յոթանասունչորս հազար յոթանասուներկու) ՀՀ դրամ գումար:
2. Քաղաքացի՝ Աշոտ Թելմանի Մխիթարյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Աշոտ Թելմանի Մխիթարյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշումը <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով ենթակա է հարկադիր կատարման՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

03.11.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» նոյեմբերի 2023 թվականի N 2784-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՇՈՒՌԻԿ ՀԱՅԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով, 163-րդ հոդվածով և հիմք ընդունելով Շուռիկ Հայկի Հակոբյանի 2023 թվականի նոյեմբերի 6-ի դիմումը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Շուռիկ Հայկի Հակոբյանին տրամադրել 2023 թվականի ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 2023 թվականի նոյեմբերի 7-ից:
2. Ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 10 աշխատանքային օր՝ 2023 թվականի նոյեմբերի 7-ից 20-ը ներառյալ:
3. Ամենամյա նվազագույն արձակուրդի ընթացքում Շուռիկ Հայկի Հակոբյանի ծառայողական պարտականությունների կատարումը վերապահել նույն բաժնի պետի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար Գագիկ Ալեքսանի Մարտիրոսյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Շուռիկ Հայկի Հակոբյանին և Գագիկ Ալեքսանի Մարտիրոսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

06.11.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» Նոյեմբերի 2023 թվականի N 2783-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 01 -Ի N 1996-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2020 թվականի դեկտեմբերի 01-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 106,8 քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 47,74 քառակուսի մետր արտաքին (35,12 քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինությունները համայնքային սեփականություն համարելու և օրինական ճանաչելու մասին>> N 1996-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն է առաջացել, չափագրության մեջ տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի 11/02/2021 թվականի N Կ-11022021-08-0151) : Ներկայացվել է նոր ճշտագրված չափագրություն:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2020 թվականի դեկտեմբերի 01-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 106,8 քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 47,74 քառակուսի մետր արտաքին (35,12 քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինությունները համայնքային սեփականություն համարելու և օրինական ճանաչելու մասին>> N 1996-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) վերնագրում, նախաբանում, որոշման 1-ին կետում <<106,8 (մեկ հարյուր վեց ամբողջ ութ տասնորդական)>> թիվը և բառերը փոխարինել <<34,65 (երեսունչորս ամբողջ վաթսունհինգ հարյուրերորդական)>> թվով և բառերով, <<47,74 (քառասունյոթ ամբողջ յոթանասունչորս հարյուրերորդական)>> թիվը և բառերը փոխարինել <<28,49 (քսանութ ամբողջ քառասունինը հարյուրերորդական)>> թվով և բառերով, <<35,12 (երեսունհինգ ամբողջ տասներկու հարյուրերորդական)>> թիվը և բառերը փոխարինել <<21,71 (քսանմեկ ամբողջ յոթանասունմեկ հարյուրերորդական)>> թվով և բառերով.

2) նախաբանում <<կետի>> բառից հետո լրացնել <<և հիմք՝ ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2023FFM4E3 ծածկագիրը>> բառերը և թիվը:

06.11.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ք.Գյումրի
2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«06» Հոկտեմբերի 2023 **թվականի** N 2782-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 30-Ի N 2177-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 30-ի «Քաղաքացիներ Ազատուհի Ռուբիկի Վանոյանին (3/5 մաս), Ռուբեն Միշայի Մանուկյանին (1/5 մաս) և Ցոլակ Միշայի Մանուկյանին (1/5 մաս) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոցի N 83/1 հասցեի շինության կառուցման ու սպասարկման համար զբաղեցված հողամասի մակերեսի չափը ճշտելու, հողամասի հատակագիծը հաստատելու ինչպես նաև բնակելի տան օրինական հողամասում ինքնակամ կառուցված 23.39 քառակուսի մետր արտաքին 14.63 քառակուսի մետր ներքին մակերեսով նկուղը, ինքնակամ բացված 2 դուռը, 1 պատուհանն օրինականացնելու մասին» N 2177-Ա որոշման մեջ լրացում կատարելու անհրաժեշտություն է առաջացել գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 30-ի «Քաղաքացիներ Ազատուհի Ռուբիկի Վանոյանին (3/5 մաս), Ռուբեն Միշայի Մանուկյանին (1/5 մաս) և Ցոլակ Միշայի Մանուկյանին (1/5 մաս) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոցի N 83/1 հասցեի շինության կառուցման ու սպասարկման համար զբաղեցված հողամասի մակերեսի չափը ճշտելու, հողամասի հատակագիծը հաստատելու ինչպես նաև բնակելի տան օրինական հողամասում ինքնակամ կառուցված 23.39 քառակուսի մետր արտաքին 14.63 քառակուսի մետր ներքին մակերեսով նկուղը, ինքնակամ բացված 2 դուռը, 1 պատուհանն օրինականացնելու մասին» N 2177-Ա որոշման (այսուհետ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումը՝
   1) Նախաբանի 3-րդ պարբերությունում «պատուհան» բառից հետո լրացնել «, որոնք հաշվառված են Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում N 2023D8MAFN» թիվը և բառերը:

06.11.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«06» Նոյեմբերի 2023 թվականի N 2781Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԳՐԻԳՈՐ ՀԱԿՈԲԻ ԻՎԱՆՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ 105Ա ՇԵՆՔ 1 ԲՆԱԿԱՐԱՆԻ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԻՐ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՆԵՐԻ՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՐԻԳՈՐԻ ԻՎԱՆՅԱՆԻ ԵՎ ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐԻ ԻՎԱՆՅԱՆԻ ՄԱՍՆԱԲԱԺԻՆՆԵՐԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2023 թվականի նոյեմբերի 1-ին Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին է դիմել քաղաքացի Գրիգոր Հակոբի Իվանյանը (անձնագիր՝ AR0589242, տրված՝ 14.02.2018 թվականին 001-ի կողմից)՝ խնդրելով տալ համաձայնություն վաճառելու իր անչափահաս երեխաների՝ 15.04.2011 թվականին ծնված Հարություն Գրիգորի Իվանյանի (ծննդյան վկայական՝ ԱԲ №121637) և 08.10.2013 թվականին ծնված Սուսաննա Գրիգորի Իվանյանի (ծննդյան վկայական՝ ԱԲ №281736) Գյումրի քաղաքի Երևանյան խճուղի 105ա շենք 1 բնակարանի մասնաբաժինները:

Վերոնշյալ հասցեի բնակարանի համասեփականատերեր են հանդիսանում նաև անչափահասներ՝ Հարություն Գրիգորի Իվանյանը և Սուսաննա Գրիգորի Իվանյանը (հիմք՝ 19.03.2014 թվականին գրանցված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 19032014-08-0007):

Նիստին ներկա գտնվող անչափահասների հայրը՝ Գրիգոր Հակոբի Իվանյանը ներկայացրեց հայտարարություն, որով իր անչափահաս երեխաներ՝ Սուսաննա Գրիգորի Իվանյանին և Հարություն Գրիգորի Իվանյանին պատկանող բնակարանի մասը վաճառելուց հետո 6/վեց/ամսյա ժամկետում պարտավորվում է ապահովել բնակարանային սեփականության իրավունքը, իրենց ունեցած մասնաբաժնից ոչ պակաս (հիմք՝ հայտարարություն, տրված՝ 01.11.2023 թվականին ՀՀ «Շիրակի մարզ» նոտարական տարածքի նոտար՝ Ռ.Մուկուչյանի կողմից, գրանցված է գրանցամատյանում թիվ 7762):

Նիստին ներկա գտնվող անչափահասներ՝ Սուսաննա Գրիգորի Իվանյանը և Հարություն Գրիգորի Իվանյանը հայտնեցին, որ համաձայն են վաճառելու բնակարանի իրենց մասնաբաժինները:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության դրույթներով, հիմք ընդունելով քաղաքացի Գրիգոր Հակոբի Իվանյանի 2023 թվականի նոյեմբերի 1-ի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված թիվ 23601 թվագրությամբ) և Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2023 թվականի նոյեմբերի 3-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Համաձայնություն տալ Գրիգոր Հակոբի Իվանյանին (անձնագիր՝ AR0589242) վաճառելու իր անչափահաս երեխաների՝ 15.04.2011 թվականին ծնված Հարություն Գրիգորի Իվանյանի (ծննդյան վկայական՝ ԱԲ №121637) և 08.10.2013 թվականին ծնված Սուսաննա Գրիգորի Իվանյանի (ծննդյան վկայական՝ ԱԲ №281736) Գյումրի քաղաքի Երևանյան խճուղի 105ա շենք 1 բնակարանի մասնաբաժինները, նոր բնակարան ձեռք բերելու կապակցությամբ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գրիգոր Հակոբի Իվանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

06.11.2023

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«06» նոյեմբերի 2023 **թվականի** N 2780-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍԱՎՈՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 324.9 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 77.54 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (58.69 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Սավոյան փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 324.9 (երեք հարյուր քսանչորս ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 77.54 (յոթանասունյոթ ամբողջ հիսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (58.69 (հիսունութ ամբողջ վաթսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տուն:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին>> թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի և <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի 33-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված 2023WGYY3L ծածկագրով մուտքագրման տեղեկանքը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Սավոյան փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 324.9 (երեք հարյուր քսանչորս ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 77.54 (յոթանասունյոթ ամբողջ հիսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (58.69 (հիսունութ ամբողջ վաթսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի տունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Դավիթ Արմենի Խաչատրյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը /պատասխանատու քաղաքաշինության և ճարտարապետության բաժին/:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

06.11.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» Նոյեմբերի 2023 թվականի N 2449-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՈՒՇ-2 ԹԱՂԱՄԱՍԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ 172,0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔՆԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 302,95 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (254,85 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Մուշ-2 թաղամասի հարևանությամբ 172,0 (մեկ հարյուր յոթանասուներկու) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 302,95 (երեք հարյուր երկու ամբողջ ինսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին 254,85 (երկու հարյուր հիսունչորս ամբողջ ութսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի կիսակառույց շինություն, որը տիրապետում և օգտագործում է քաղաքացի Խաչատուր Լևոնի Նաջարյանը:

Նկատի ունենալով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի, ղեկավարվերով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝, որը կադաստրի կոմիտեում հաշվառված է՝ 2022FH38XY ծածկագրով:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Մուշ-2 թաղամասի հարևանությամբ 172,0 (մեկ հարյուր յոթանասուներկու) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 302,95 (երեք հարյուր երկու ամբողջ ինսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին 254,85 (երկու հարյուր հիսունչորս ամբողջ ութսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի կիսակառույց շինությունը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Խաչատուր Լևոնի Նաջարյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

06.11.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի
2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» Նոյեմբերի 2023 թվականի N 2778Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԼԱԼԱՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ 413,19 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔՆԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 413,46 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (272,57 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Լալայան փողոցի հարևանությամբ 413,19 (չորս հարյուր տասերեք ամբողջ տասնինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 413,46 (չորս հարյուր տասերեք ամբողջ քառասունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին 272,57 (երկու հարյուր յոթանասուներկու ամբողջ հիսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ, որոնք տիրապետում և օգտագործում է քաղաքացի Աղուսիկ Կարապետյանը:

Նկատի ունենալով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի, ղեկավարվերով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝, որը կադաստրի կոմիտեում հաշվառված է՝ 2023KQYF7C ծածկագրով:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաք Լալայան փողոցի հարևանությամբ 413,19 (չորս հարյուր տասերեք ամբողջ տասնինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 413,46 (չորս հարյուր տասերեք ամբողջ քառասունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին 272,57 (երկու հարյուր յոթանասուներկու ամբողջ հիսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Աղուսիկ Կարապետյանին :
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

06.11.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի
2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» Նոյեմբերի 2023 թվականի N 2777-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-Ի N 801-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 30-ի <<Քաղաքացիներ Լուսիկ Հելբերտի Սիմոնյանին 5/6 մաս և Լալա Աշոտի Սիմոնյանին 1/6 մաս ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Կոմիտասի փողոց N 43 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 175,85 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունը օրինական ճանաչելու և կառուցման ու սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 90,03 քառ.մ մակերեսով հողամասի կարգավիճակի մասին>> N 801-Ա որոշման մեջ լրացում կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած վրիպակի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 10/01/2023 թվականի N Կ-10012023-08-0012 որոշում):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 30-ի <<Քաղաքացիներ Լուսիկ Հելբերտի Սիմոնյանին 5/6 մաս և Լալա Աշոտի Սիմոնյանին 1/6 մաս ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Կոմիտասի փողոց N 43 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 175,85 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունը օրինական ճանաչելու և կառուցման ու սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 90,03 քառ.մ մակերեսով հողամասի կարգավիճակի մասին>> N 801-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝

1) նախաբանում <<թվագրմամբ>> բառից հետո լրացնել <<և հիմք՝ ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2023HWAVRP ծածկագիրը>> բառերը և թվերը:

06.11.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ք.Գյումրի
2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» Նոյեմբերի 2023 թվականի N 2776 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 07-Ի N 1968-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 07-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Սավոյան փողոցի հարևանությամբ 821,62 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 195,48 քառակուսի մետր արտաքին (157,41 քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինությունը համայնքային սեփականություն համարելու և օրինական ճանաչելու մասին>> N 1968-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն է առաջացել, չափագրության մեջ տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի 18/10/2023 թվականի N Կ-18102023-08-0142) : Ներկայացվել է նոր ճշտգրտված չափագրություն:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 07-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Սավոյան փողոցի հարևանությամբ 821,62 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 195,48 քառակուսի մետր արտաքին (157,41 քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինությունը համայնքային սեփականություն համարելու և օրինական ճանաչելու մասին>> N 1968-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) վերնագրում, նախաբանում, որոշման 1-ին կետում <<821,62(ութ հարյուր քսանմեկ ամբողջ վաթսուներկու հարյուրերորդական)>> թիվը և բառերը փոխարինել <<840,87 (ութ հարյուր քառասուն ամբողջ ութսունյոթ հարյուրերորդական)>> թվով և բառերով, <<195,48 (մեկ հարյուր հիսունհինգ ամբողջ քառասունութ հարյուրերորդական)>> թիվը և բառերը փոխարինել <<205,88 (երկու հարյուր հինգ ամբողջ ութսունութ հարյուրերորդական)>> թվով և բառերով, <<157,41 (մեկ հարյուր հիսունյոթ ամբողջ քառասունմեկ հարյուրերորդական)>> թիվը և բառերը փոխարինել <<162,8 (մեկ հարյուր վաթսուներկու ամբողջ ութ տասնորդական)>> թվով և բառերով:

06.11.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ք.Գյումրի
2023 թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» Նոյեմբերի 2023 թվականի N 2775-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 25-Ի N 2138-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 25-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Արևելյան շրջանցող ճանապարհի հարևանությամբ 1147,49 քառակուսի մետր մակերեսով հողամասը և նրա վրա առկա ինքնակամ կառուցված 405,18 քառակուսի մետր արտաքին 326,57 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններն համայնքային սեփականություն համարելու և օրինական ճանաչելու մասին>> N 2138-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն է առաջացել, չափագրության մեջ տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի 19/10/2023 թվականի N Կ-19102023-08-0155) : Ներկայացվել է նոր ճշտգրտված չափագրություն:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 25-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Արևելյան շրջանցող ճանապարհի հարևանությամբ 1147,49 քառակուսի մետր մակերեսով հողամասը և նրա վրա առկա ինքնակամ կառուցված 405,18 քառակուսի մետր արտաքին 326,57 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններն համայնքային սեփականություն համարելու և օրինական ճանաչելու մասին>> N 2138-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) վերնագրում, նախաբանում, որոշման 1-ին կետում <<405,18(չորս հարյուր հինգ ամբողջ տասնութ հարյուրերորդական)>> թիվը և բառերը փոխարինել <<411,17 (չորս հարյուր տասնմեկ ամբողջ տասնյոթ հարյուրերորդական)>> թվով և բառերով, <<326,57 (երեք հարյուր քսանվեց ամբողջ հիսունյոթ հարյուրերորդական)>> թիվը և բառերը փոխարինել <<332,28 (երեք հարյուր երեսուներկու ամբողջ քսանութ հարյուրերորդական)>> թվով և բառերով:

06.11.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ք.Գյումրի
2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«06» Հոկտեմբերի 2023 թվականի №2774-Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԿԻՆԳԻՍԵՊԻ ՓՈՂՈՑ, 19 ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԱՐՀԵՍՏԱՆՈՑ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №0232739) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Շողիկ Հովհաննիսյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №23493 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Կինգիսեպի փողոց, 19 ատամնաբուժական արհեստանոց հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №0232739) վերահասցեավորել՝

ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Վ. Չերազի փողոց, 19 շենք, 4/1 արհեստանոց

Недействительная подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«06» Հոկտեմբերի 2023 թվականի №2743Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԼԱԼԱՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 356.27 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՈՒ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ 356.27 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հոկտեմբերի 27-ի №2687–Ա որոշումը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաքի Լալայան փողոցի հարևանությամբ գտնվող 356.27 քառակուսի մետր մակերեսով հողամասին և դրա վրա ինքնակամ կառուցված ու օրինական ճանաչված 356.27 քառակուսի մետր արտաքին մակերեսով սպասարկման օբյեկտին տրամադրել հասցե՝

ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ղարիբջանյանի խճուղի, 1/1 սպասարկման համալիր

Недействительная подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«06» Հոկտեմբերի 2023 թվականի №2772-Ա

ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՍՄԻԿ ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ, 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ, 64 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի / այսուհետ՝ Օրենք/ 5-րդ, 6-րդ, 8-րդ հոդվածների համաձայն՝ աղբահանության վճարը սույն օրենքով նախատեսված վճարողների կողմից աղբահանության դիմաց սույն օրենքով սահմանված կարգով և սույն օրենքով սահմանված դրույքաչափերի սահմաններում համայնքի ավագանու կողմից սահմանված չափով համայնքի բյուջե կամ արտաբյուջե գանձվող պարտադիր գանձույթ է:

Աղբահանության վճար վճարողներ են համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի, այդ թվում՝ բնակելի շինության սեփականատեր համարվող կամ որևէ այլ իրավունքով այդ գույքը տիրապետող կամ օգտագործող ֆիզիկական անձինք (ներառյալ՝ անհատ ձեռնարկատերը և արտոնագրային վճար վճարողը), իրավաբանական անձինք, հիմնարկները, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, իսկ պետական կամ համայնքային սեփականություն համարվող անշարժ գույքը վարձակալության կամ անհատույց օգտագործման հիմքով քաղաքացու կամ իրավաբանական անձի կողմից տիրապետման դեպքում՝ վարձակալը, անհատույց օգտագործողը: Եթե միևնույն գույքի նկատմամբ սույն օրենքի իմաստով աղբահանության վճար վճարող են համարվում մեկից ավելի անձինք, ապա աղբահանության վճարի գծով սույն օրենքով սահմանված պարտավորությունների համար նրանք կրում են համապարտ պատասխանատվություն:

Համայնքի ավագանու որոշմամբ աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները համայնքի բյուջեի միջոցների հաշվին իրականացնում են անմիջականորեն համայնքային հիմնարկները կամ համայնքի կարիքների համար գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով ընտրված օպերատորը:

Տվյալ դեպքում, «Վերտիկալ լյուքս սիստեմ» ՍՊԸ-ն /ք. Գյումրի, Տիմիրյազևի 1/ համարվում է աղբահանության վճար վճարող:

Օրենքի 14–րդ հոդվածի 1-ին մասի 1–ին կետի համաձայն՝ ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում, այդ թվում՝ հասարակական և արտադրական շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով՝ առևտրի (այդ թվում՝ շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացնող շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հիսունից մինչև հարյուր Հայաստանի Հանրապետության դրամ:

Աղբի տարբեր տեսակների համար կարող են սահմանվել սույն հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված դրույքաչափեր՝ հաշվի առնելով աղբի գոյացման վայրի (անշարժ գույքի) նպատակային կամ գործառնական նշանակությունը:

Տվյալ դեպքում, «Վերտիկալ լյուքս սիստեմ» ՍՊ ընկերությունը /ք. Գյումրի, Տիմիրյազևի 1 հասցեում գտնվող շինությունների/ նկատմամբ, 2013–2023 թվականների համար սահմանվել է ամսեկան՝ 15 300 /տասնհինգ հազար երեք հարյուր/ ՀՀ դրամ, տարեկան՝ 183 600 /հարյուր ութսուներեք հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ, աղբահանության վճար:

Օրենքի 15-րդ, 18-րդ, 19-րդ հոդվածների համաձայն, աղբահանության վճարի հաշվարկման հաշվետու ժամանակահատվածը օրացուցային ամիսն է: Յուրաքանչյուր ամսվա համար աղբահանության վճարը պետք է վճարվի կանխիկ կամ անկանխիկ՝ հաջորդող ամսվա 15-ը ներառյալ:

Աղբահանության վճար վճարողների հաշվառումը, աղբահանության վճարը հաշվարկելը, ինչպես նաև այդ վճարի գանձումը և համայնքի բյուջե փոխանցումն իրականացնում է համայնքի ղեկավարը: Աղբահանության վճար վճարողների հաշվառումը, աղբահանության վճարը հաշվարկելը, ինչպես նաև այդ վճարի գանձումը (մուտքագրումը) համայնքի բյուջե կամ արտաբյուջետային հաշիվ համայնքի ղեկավարի ներկայացմամբ և համայնքի ավագանու կողմից կարող են վերապահվել օպերատորին կամ այլ կազմակերպությանը (կազմակերպություններին):

Օրենքի 20-րդ և 21-րդ հոդվածների համաձայն՝ 1. աղբահանության վճար վճարողների հիմնական իրավունքներն են՝ 1) ինքնուրույն հաշվարկել իրենց կողմից կատարվող վճարի չափը և ստուգել դրա համապատասխանությունը կատարված հաշվարկների հետ.

2. Աղբահանության վճար վճարողները պարտավոր են՝ սույն օրենքով սահմանված ժամկետում և սահմանված դրույքաչափով վճարել աղբահանության վճարը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասի» ՀՀ օրենքի 3-րդ, «Աղբահանության և Սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 5-րդ, 6-րդ, 8-րդ, 14-րդ, 15-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ և 21-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «Վերտիկալ լյուքս սիստեմ» ՍՊ ընկերությունից հօգուտ համայնքի բյուջեի գանձել 1 360 514 /մեկ միլիոն երեք հարյուր վաթսուն հազար հինգ հարյուր տասնչորս/ ՀՀ դրամ, որից ապառքը կազմում է 830 313 /ութ հարյուր երեսուն հազար երեք հարյուր տասերեք/ ՀՀ դրամ, իսկ օրենքով սահմանված ժամկետում աղբի վճարը չվճարելու արդյունքում առաջացած տույժը՝ 530 201 /հինգ հարյուր երեսուն հազար երկու հարյուր մեկ/ ՀՀ դրամ որպես աղբահանության վարձավճարի և հաշվարկված տույժի գումար:
2. Որոշման օրինակը 3-օրյա ժամկետում ուղարկել «Վերտիկալ լյուքս սիստեմ» ՍՊ ընկերությանը /տնօրեն Խաչատուր Հովհաննիսյան/:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Վերտիկալ լյուքս սիստեմ» ՍՊ ընկերությանը /տնօրեն Խաչատուր Հովհաննիսյան/ պատշաճ իրազեկելու պահից:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել՝ «Վերտիկալ լյուքս սիստեմ» ՍՊ ընկերության կողմից, որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հետո երկամսյա ժամկետում վարչական կամ դատական կարգով:
5. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

10.11.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 229/494 ՀԱՄԱՐԱԿԱԼՄԱՄԲ ՈՉ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՄՈՆՏԱԺԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՌԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«10»«Հոկտեմբերի» 2023թվական N 2835 Ա

1. **Վարչական ակտով լուծվող հարցի նկարագրությունը.**

Գյումրի քաղաքի թիվ 229/494համարակալմամբ ոչ հիմնական շինությամբ մասամբ ծանրաբեռնված է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի «բ» կետի համաձայն, Գյումրի համայնքի ղեկավարի աշխատակազմում վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցվել է վարչական վարույթ:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում, 2023թ.-ի փետրվարի 21-ին նշանակվել են լսումներ, որն անցկացվել է քաղաքացիներ՝ Գաբրիել Տիգրանի Սեթյանի, Աստղիկ Միսակի Սեթյանի, Տիգրան Գաբրիելի Սեթյանի, Անի Գաբրիելի Սեթյանի, Ալվարդ Արթուրի Սեթյանի բացակայությամբ, ովքեր պատշաճ ծանուցվել են, սակայն չեն նեկայացել հարուցված վարչական վարույթի լսումներին :

2. **Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստեր.**

Վարչական գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության ընթացքում ձեռք բերված ապացույցներով վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը՝

Գյումրի քաղաքի թիվ 229/494 համարակալմամբ ժամանակավոր կացարանի բնակիչները Շիրակացու փողոցի, 27 շենքի թիվ 34 բնակարանի դիմաց 2010 թվականին 5 անձով ստացել են Մուշ-2 թաղամասի, 24-րդ շենքի, թիվ 52 երկու սենյականոց բնակարանը.

1. Սեթյան Գաբրիել Տիգրանի
2. Սեթյան Աստղիկ Միսակի
3. Սեթյան Տիգրան Գաբրիելի

4. Սեթյան Անի Գաբրիելի
5. Սեթյան Ալվարդ Արթուրի

Հայաստանի Հանրապետության կառավարության 2009թվականի նոյեմբերի 26-ի թիվ 1402-Ն որոշման 6-րդ կետի համաձայն, կառուցված բազմաբնակարան շենքերի բնակարանների հատկացումից հետո մեկամսյա ժամկետում՝ բնակարան ստացող քաղաքացիների և նրանց ընտանիքների անդամների կողմից բնակությունից ազատված ոչ հիմնական շինությունները (տնակները) ենթակա են քանդման՝ կառուցապատողի կամ համապատասխան համայնքի ղեկավարի կողմից:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 13-ի «Աղետի գոտու բնակավայրերի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը երկրաշարժից հետո տեղադրված կամ կառուցված ոչ հիմնական շինություններից ազատելու կարգը հաստատելու մասին» N 1601-Ն որոշման հիման վրա Գյումրի համայնքի ղեկավարի կողմից հաստատված ցուցակում Գյումրի համայնքի թիվ 229/494 համարակալմամբ տնակի բնակիչները ընդգրկված են «Պետական աջակցության ծրագրերի շրջանակներում բնակարան ստացած, սակայն ոչ հիմնական շինությունը չքանդելու պատճառով հատկացված բնակարանի նկատմամբ իրանց սեփականության իրավունքը դեռեվս չգրանցած ընտանիքների կողմից զբաղեցված ոչ հիմնական շինություններ»-ի կատեգորիայում:

Պետական ծրագրի շրջանակում բնակարան ստացած, սակայն տնակը քանդված չլինելու պատճառով հատկացված բնակարանի նկատմամբ իրենց սեփականության իրավունքը դեռևս չգրանցած ընտանիքներինը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 6-ամսյա ժամկետում բնակարանների նկատմամբ իրենց սեփականության իրավունքի գրանցման պայմանով, իսկ սահմանված ժամկետում բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքը չգրանցելու դեպքում ոչ հիմնական շինությունը ենթակա է քանդման (ապամոնտաժման)՝ սահմանված ժամկետի ավարտից հետո մեկամսյա ժամկետում, սույն կարգի 8-րդ կետով սահմանված պայմաններին համապատասխան, որի մասին քաղաքացին գրավոր ծանուցվել է:

3. Վարչական ակտն ընդունելու հիմնավորումը.

ՀՀ կառավարության 2006թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 33-րդ հոդվածի համաձայն, համայնքի ղեկավարը սեփական նախաձեռնությամբ ընդունում է որոշում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնակամ կառույցներն օրինականացնելու կամ քանդելու մասին:

Հողային օրենսգրքի 44-րդ հոդվածի համաձայն, քաղաքացիների ու իրավաբանական անձանց հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքը հողամասերն իրենց հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունքն է՝ օրենքով նախատեսված սահմանափակումների ու այլ պայմանների պահպանմամբ: Հողամասերի նկատմամբ քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականության իրավունքը ծագում է պետական ու համայնքային հողերի մասնավորեցման, ժառանգման, առուվաճառքի, նվիրատվության և հողի հետ կապված այլ գործարքների ու իրավաբանական փաստերի հիման վրա:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն, համայնքի ղեկավարը քաղաքաշինության և կոմունալ տնտեսության

բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները. կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը, ընդունում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում և իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին » օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, եթե վարչական վարույթ հարուցելուց հետո վարչական մարմնի տրամադրության տակ առկա են համապատասխան վարչական ակտ ընդունելու համար անհրաժեշտ փաստաթղթերը, բավարար չափով պարզաբանված և ճշգրտված են տվյալ գործի հանգամանքները, ապա վարչական մարմինը պարտավոր է վարչական ակտ ընդունել նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո՝ ողջամիտ ժամկետում՝ չսպասելով ընդհանուր կամ հատուկ ժամկետի լրանալուն:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին » օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին՝ սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ այդ ակտով այլ բան նախատեսված չէ:

Հաշվի առնելով վերը նշված փաստական ու իրավական հիմնավորումները և հարուցված վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Պարտավորեցնել քաղաքացիներ՝ Գաբրիել Տիգրանի Սեթյանին, Աստղիկ Միսակի Սեթյանին, Տիգրան Գաբրիելի Սեթյանին, Անի Գաբրիելի Սեթյանին, Ալվարդ Արթուրի Սեթյանին որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ապամոնտաժել Գյումրի քաղաքի թիվ 229/494 համարակալմամբ ոչ հիմնական շինությունը, ազատելով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը:
2. Նշված ժամկետում ոչ հիմնական շինությունը չապամոնտաժվելու դեպքում՝ հանձնարարել Գյումրի համայնքի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման բաժնին և Գյումրի համայնքի «Գյումրու կոմունալ ծառայություն» համայնքային բյուջետային հիմնարկին ապամոնտաժել վերոնշյալ հասցեում գտնվող ոչ հիմնական շինությունը և անօրինական տիրապետումից ազատել համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը:
3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության ոստիկանության Գյումրի քաղաքի վարչության պետին՝ Գյումրու համայնքապետարանի կողմից վարչական հարկադրանքի միջոցներ կիրառելու ընթացքում, համապատասխան վայրում ապահովել հասարակական կարգի պահպանումը:
4. Սույն որոշմամբ նախատեսված ապամոնտաժման ու դրան զուգորդող այլ աշխատանքների իրականացման հետ կապված ծախսերը՝ դատական կարգով բռնագանձել Գաբրիել Տիգրանի Սեթյանից, Աստղիկ Միսակի Սեթյանից, Տիգրան Գաբրիելի Սեթյանից, Անի Գաբրիելի Սեթյանից, Ալվարդ Արթուրի Սեթյանից :

5. Որոշման օրինակը երեք օրվա ընթացքում ուղարկել քաղաքացիներ՝ Գաբրիել Տիգրանի Սեթյանին, Աստղիկ Միսակի Սեթյանին, Տիգրան Գաբրիելի Սեթյանին, Անի Գաբրիելի Սեթյանին, Ալվարդ Արթուրի Սեթյանին :
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պատշաճ ծանուցման պահից:
7. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կամ դատական կարգով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով սահմանված երկամսյա ժամկետում:

Недействительная подпись

Վ. Սամսոնյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

ՔԱՂԱՔԱՑԻ ԼՈՒՍՅԱ ՍԵՅՐԱՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ՄԱՍՈՎ ԿԱՐՃԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«10»«Սեպտեմբերի» 2023թվական N 2834-Ա

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար՝ Վարդգես Սամսոնյանս, վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 275-րդ հոդվածով սահմանված կարգով, վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելով, ղեկավարվելով Օրենսգրքի 219.1 հոդվածով, 2023թվականի սեպտեմբերի 19-ին Գյումրի քաղաքում, դռնբաց վարույթի ընթացքում, քաղաքացի Լուսյա Սեյրանի Հարությունյանի մասնակցությամբ, Օրենսգրքի 277-րդ հոդվածով սահմանված ժամկետների պահպանմամբ, 248-րդ հոդվածով սահմանված սկզբունքներով և 278-279-րդ հոդվածներով սահմանված կարգով, քննելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի աշխատակիցների կողմից 2023 թվականի հոկտեմբերի 27-ին կազմած քաղաքացի Լուսյա Սեյրանի Հարությունյանի կողմից Օրենսգրքի՝ 154-րդ հոդվածի 3–րդ մասով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը, պարզեցի.

2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ

ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

2023թվականի հոկտեմբերի 27-ին բացահայտվել և տեղում արձանագրվել է, որ քաղաքացի Լուսյա Սեյրանի Հարությունյանի կողմից Գյումրի քաղաքի, Ռիժկովի փողոց, 6–րդ շ, թիվ 1 հասցեում, որը սեփականության իրավունքով պատկանում Կարինե Նիկոյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 20092023–08–0036վկայական), ինքնակամ շինարարական աշխատանքներ են իրականացվել, այսինքն կատարել է վարչական իրավախախտում, որը նախատեսված է Օրենսգրքի 154-րդ հոդվածի 3–րդ մասով:

Քաղաքացի Լուսյա Սեյրանի Հարությունյանը վարույթի ժամանակ հայտնեց, որ նշված հասցեում իր կողմից շինարարական աշխատանքներն իրականացվել են դեռևս 2023թվականի հունիս–հուլիս ամիսներին և արդեն ավարտված են:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն, վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի, 8-րդ կետի համաձայն, համայնքի ղեկավարը քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները՝ 8) կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը, ընդունում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում և իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը.

Ի նկատի ունենալով վերոգրյալը գտնում եմ, որ առկա է Օրենսգրքի 247-րդ հոդվածի 7-րդ կետով սահմանված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը բացառող հանգամանք, համաձայն որի՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության պահին սույն օրենսգրքի 37-րդ հոդվածով նախատեսված ժամկետներն անցնելու դեպքում:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ, 35-րդ, 50-րդ հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետով, 55-րդ, 58-րդ հոդվածի 1-ին կետով, 59-րդ, 60-րդ, 69-րդ, 70-րդ, 71-րդ, Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 247-րդ հոդվածի 7-րդ կետով, 282-րդ հոդվածի 2-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի, 8-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Քաղաքացի Լուսյա Սեյրանի Հարությունյանի կողմից վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը տույժի մասով կարճել:
2. Պարտավորեցնել քաղաքացի Լուսյա Սեյրանի Հարությունյանին որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում ապահովել ինքնակամ շինարարության հետևանքների վերացումը:
3. Որոշման օրինակը երեք օրվա ընթացքում ուղարկել քաղաքացի Լուսյա Սեյրանի Հարությունյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պատշաճ ծանուցման պահից:
5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով, որոշումը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Недействительная подпись

Վ. Սամսոնյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 10 >> Նոյեմբերի 2023 թվականի N 2833 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ << ՀԵՆԶԵԼ ԵՎ ԳՐԵՏԵԼ-ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԿԱՐԻՆԵ ՓԱՅԼԱԿԻ ՄԵԼԻՔՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ հաստատված ցանկի 1-ին կետով և հիմք ընդունելով Կարինե Փայլակի Մելիքյանի 2023 թվականի նոյեմբերի 10-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի << Հենզել և Գրետել-մսուր մանկապարտեզ >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Կարինե Փայլակի Մելիքյանին տրամադրել 2023 թվականի աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդը՝ 2023 թվականի նոյեմբերի 27-ից:

2. Ամենամյա երկարացված արձակուրդը՝ 25 աշխատանքային օր՝ 2023 թվականի նոյեմբերի 27-ից դեկտեմբերի 29-ը ներառյալ:

3. Ամենամյա երկարացված արձակուրդի ընթացքում Կարինե Փայլակի Մելիքյանի աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության դաստիարակ Իրինա Էդուարդի Խաչատրյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարինե Փայլակի Մելիքյանին և Իրինա Էդուարդի Խաչատրյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

10.11.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 10 >> Նոյեմբերի 2023 թվականի N 2832-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ << ՄԱՐԻԱՄ ԵՎ ԵՐԱՆՈՒՀԻ ԱՍԼԱՄԱԶՅԱՆ ՔՈՒՅՐԵՐԻ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ >> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԿԱՐԵՆ ՎԱԼԵՐԻԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՐԾԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով, 163-րդ հոդվածով և հիմք ընդունելով Կարեն Վալերիի Բարսեղյանի 2023 թվականի նոյեմբերի 10-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի << Մարիամ և Երանուհի Ասլամազյան քույրերի պատկերասրահ >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Կարեն Վալերիի Բարսեղյանին տրամադրել 2022 թվականի աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 2023 թվականի նոյեմբերի 14-ից:
2. Ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 15 աշխատանքային օր՝ 2023 թվականի նոյեմբերի 14-ից 30-ը ներառյալ:
3. Ամենամյա նվազագույն արձակուրդի ընթացքում Կարեն Վալերիի Բարսեղյանի աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության ֆոնդապահ Անահիտ Հրաչի Փահլևանյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարեն Վալերիի Բարսեղյանին և Անահիտ Հրաչի Փահլևանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

x Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«10» Հոկտեմբերի 2023 թվականի № 2831-Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 9,77 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0268-0012) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաքի Տեր-Գաբրիելյան փողոցի հարևանությամբ գտնվող 9,77 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0268-0012) տրամադրել հասցե՝

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Ս. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՓՈՂՈՑ, 24/1 ՀՈՂԱՄԱՍ

Недействительная подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«10» Սեպտեմբերի 2023 թվականի № 2830Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 25–Ի №2137-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 24-րդկետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33–րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 25–Ի «Գյումրի քաղաքի Տեր-Գաբրիելյան փողոցի հարևանությամբ գտնվող 482,26 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասին և դրա վրա ինքնակամ կառուցված ու օրինական ճանաչված 134,65 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինություններին համայնքի գույք գրանցելու նպատակով հասցե տրամադրելու մասին
» №2137-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1. որոշման կայացման մեջ վերջին տողում «ՀՈՂԱՄԱՍ» բառը փոխարինել «ՇԻՆՈՒԹՅՈՒՆ» բառով:

Недействительная подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«10» Հոկտեմբերի 2023 թվականի №2829-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-Ի №2405-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 24-րդկետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի ղեկավարի 2023 թվականի սեպտեմբերի 27-ի «Գյումրի քաղաք, Մատնիշյան փողոց, 14 հասցեին կից գտնվող 8,86 քառակուսի մետր մակերեսով հողամասին և դրա վրա ինքնակամ կառուցված ու օրինական ճանաչված 17,72 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինությանը համայնքի գույք գրանցելու նպատակով հասցե տրամադրելու մասին» №2405-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1. որոշման կայացման մեջ վերջին տողում «ՀՈՂԱՄԱՍ» բառը փոխարինել «ՇԻՆՈՒԹՅՈՒՆ» բառով:

Недействительная подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«10» Նոյեմբերի 2023 թվականի N 2828Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՐԿՈՒ ԱՅԳԻՆԵՐԻ, ՄԵԿ ՊՈՒՐԱԿԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ և ՄԵԿ ՋԲՈՍԱՅԳՈՒ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետով, 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<գ>> պարբերությամբ, 8-րդ կետի 3-րդ ենթակետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՐԿՈՒ ԱՅԳԻՆԵՐԻ, ՄԵԿ ՊՈՒՐԱԿԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ և ՄԵԿ ՋԲՈՍԱՅԳՈՒ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝

Հանձնաժողովի նախագահ՝

1) Մենուա Մկրտչյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ,

Հանձնաժողովի անդամներ՝

2) Նարեկ Բեգզադյան – Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալի օգնական,

3) Շուռիկ Հակոբյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժնի պետի տեղակալ

4) Օլգա Գևորգյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ,

5) Լևոն Բարսեղյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գործակալ

Հանձնաժողովի քարտուղար՝

6) Արմինե Սարգսյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

10.11.2023

x

2023թ. ք. Գյումրի

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«10» Հոկտեմբերի 2023 **թվականի** N 2827Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՐԿՈՒ ԱՅԳԻՆԵՐԻ, ՄԵԿ ՊՈՒՐԱԿԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ և ՄԵԿ ՋԲՈՍԱՅԳՈՒ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> և <<բ>> պարբերություններով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՐԿՈՒ ԱՅԳԻՆԵՐԻ, ՄԵԿ ՊՈՒՐԱԿԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ և ՄԵԿ ՋԲՈՍԱՅԳՈՒ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝

1) պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով՝

ա. պատասխանատու ստորաբաժանման վերադաս՝ Ալբերտ Մարգարյան– Գյումրի համայնքի ղեկավարի խորհրդական,

բ. պատասխանատու ստորաբաժանման աշխատակից՝ Հովհաննես Աբրահամյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի տեղակալ և նույն բաժնի պետի պարտականությունները կատարող,

գ. պատասխանատու ստորաբաժանման աշխատակից՝ Արման Պապոյան – Գյումրի համայնքի «Գյումրու կոմունալ ծառայություն» ՀԲՀ-ի տնօրենի տեղակալ.

2) գնումների համակարգող՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Արմինե Սարգսյան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Недействительная подпись

2023թ. ք. Գյումրի

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«10» Նոյեմբերի 2023 թվականի N 2826-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԳԱՅԱՆԵ ԳՈՒՐԳԵՆԻ ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՈՒՇ-2 ԹԱՂԱՄԱՍ 9-ՐԴ ՓՈՂՈՑ 3 ՇԵՆՔ 60 ԲՆԱԿԱՐԱՆԻ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԻՐ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՅԻ՝ ՀԵՆՐԻԿ ԿԱՐՈՒՇԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՄԱՍՆԱԲԱԺԻՆԸ ԳՐԱՎԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2023 թվականի նոյեմբերի 9-ին Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին է դիմել քաղաքացի Գայանե Գուրգենի Չիլինգարյանը (անձնագիր՝ AT0615382, տրված՝ 21.12.2020 թվականին 064-ի կողմից) խնդրելով տալ համաձայնություն գրավադրելու իր անչափահաս երեխայի՝ 30.11.2006 թվականին ծնված Հենրիկ Կարուշի Գրիգորյանի (անձնագիր՝ AV0444997, տրված՝ 27.09.2022 թվականին 016-ի կողմից)՝ Գյումրի քաղաքի Մուշ-2 թաղամաս 9-րդ փողոց 3 շենք 60 բնակարանի մասնաբաժինը:

Վերոնշյալ հասցեի բնակարանի համասեփականատեր է հանդիսանում նաև անչափահաս՝ Հենրիկ Կարուշի Գրիգորյանը (հիմք՝ 30.09.2020 թվականին գրանցված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 30092020-08-0024):

Նիստին ներկա գտնվող երեխայի մայրը՝ Գայանե Գուրգենի Չիլինգարյանը հայտնեց, որ բնակարանի գրավադրումը նպաստելու է հետագայում բիզնեսի զարգացմանը:

Նիստին ներկա գտնվող երեխայի հայրը՝ Կարուշ Հենրիկի Գրիգորյանը աշխատում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ–ի «Ղարս» մասնաճյուղի «Գյումրի» ցանցում որպես էլ.մոնտյոր-տեսուչ և նրա միջին ամսական զուտ աշխատավարձը կազմում է 128.794 (մեկ հարյուր քսանութ հազար յոթ հարյուր իննսունչորս) ՀՀ դրամ:

Նիստին ներկա գտնվող անչափահաս՝ Հենրիկ Կարուշի Գրիգորյանը տվել է համաձայնություն իր մասնաբաժինը գրավադրելու վերաբերյալ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության դրույթներով, հիմք ընդունելով քաղաքացի Գայանե Գուրգենի Չիլինգարյանի 2023 թվականի նոյեմբերի 9-ի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված թիվ 24205 թվագրությամբ) և Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2023 թվականի նոյեմբերի 10-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Համաձայնություն տալ գրավադրելու Գայանե Գուրգենի Չիլինգարյանին (անձնագիր՝ AT0615382) իր անչափահաս երեխայի՝ 30.11.2006 թվականին ծնված Հենրիկ Կարուշի Գրիգորյանի (անձնագիր՝ AV0444997)՝ Գյումրի քաղաքի Մուշ-2 թաղամաս 9-րդ փողոց 3 շենք 60 բնակարանի մասնաբաժինը, բնակարանի գրավադրումը հետագայում նպաստելու է բիզնեսի զարգացմանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գայանե Գուրգենի Չիլինգարյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

10.11.2023

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«10» Հոկտեմբերի 2023 **թվականի** N 2825-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26 -Ի N 1935-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով, հաշվի առնելով քաղաքացի Վարդուհի Վարդանի Եղիկյանի (լիազորված անձ Բագրատ Վարդանի Եղիկյանի) դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի օգոստոսի 24-ին N 17511 թվագրմամբ) և այն հանգամանքը, որ հողամասը ազատ է կառուցապատումից (ավտոտնակ տեղադրված չի եղել)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Ուժը կորցրած ճանաչել 2017 թվականի դեկտեմբերի 26-ի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի «Քաղաքացի Վարդուհի Վարդանի Եղիկյանին ժամանակավոր մետաղական ավտոտնակ տեղադրելու նպատակով Գյումրի համայնքին պատկանող Անի թաղամասի 3-րդ փողոցի N 2/10 հասցեի 20.0 քառակուսի մետր մակերեսով հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին» N 1935-Ա որոշումը:
2. Լուծել համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին 2018 թվականի հունվարի 24-ի (գրանցված սեղանամատյանում N 0349) պայմանագիրը:
3. Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Շիրակի մարզային ստորաբաժանում՝ N 29012018-08-0015 վկայականը չեղարկելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Վարդուհի Վարդանի Եղիկյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

10.11.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

2023 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» Նոյեմբերի 2023 թվականի N 2824-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի N 30-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հունվարի 13-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Շարա-Տալյան փողոցի հարևանությամբ 2192,65 քառակուսի մետր մակերեսով հողամասը, նրա վրա առկա ինքնակամ կառուցված 515,92 քառակուսի մետր արտաքին (405,33 քառակուսի մետր ներքին) մակերեսով արտադրական նշանակության կիսակառույցը համայնքային սեփականություն համարելու և օրինական ճանաչելու մասին>> N 30-Ա որոշման մեջ լրացում կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած վրիպակի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 18/04/2023 թվականի N Կ-18042023-08-0159 որոշում):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հունվարի 13-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Շարա-Տալյան փողոցի հարևանությամբ 2192,65 քառակուսի մետր մակերեսով հողամասը, նրա վրա առկա ինքնակամ կառուցված 515,92 քառակուսի մետր արտաքին (405,33 քառակուսի մետր ներքին) մակերեսով արտադրական նշանակության կիսակառույցը համայնքային սեփականություն համարելու և օրինական ճանաչելու մասին>> N 30-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝

1) նախաբանում <<կետի>> բառից հետո լրացնել <<և հիմք՝ ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2023BBZLGE ծածկագիրը>> բառերը և թվերը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի
2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

<< 09 >> Նոյեմբերի 2023 թվականի N 2823-Ա

<< ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ >> ԾՐԱԳՐԻ ՓՈՐՁԱԳԵՏ ԱՐԹՈՒՐ ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Իր աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար << Գյումրու քաղաքային ճանապարհներ >> ծրագրի փորձագետ Արթուր Կարապետի Վարդանյանի նկատմամբ կիրառել խրախուսանք՝ միանվագ դրամական պարգևատրման տեսքով՝ մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափով:
2. Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ- գլխավոր ֆինանսիստին՝ վճարումը կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արթուր Կարապետի Վարդանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

09.11.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«09» Հոկտեմբերի 2023 թվականի №2822-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 25-Ի №2127-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 24-րդկետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 25-ի «Գյումրի քաղաքի Տիգրանյան փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 127,5 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասին և դրա վրա ինքնակամ կառուցված ու օրինական ճանաչված 76,94 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տանը համայնքի գույք գրանցելու նպատակով հասցե տրամադրելու մասին» №2127-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1. որոշման կայացման մեջ վերջին տողում «ՀՈՂԱՄԱՍ» բառը փոխարինել «ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ» բառերով:

Недействительная подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» Հոկտեմբերի 2023 թվականի N 2824 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27-Ի N 1875-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հուլիսի 27-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Հ.Սարգսյան փողոցի հարևանությամբ 170,06 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի տան և դրա կառուցման ու սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված 790,51 քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ քաղաքացի Ֆարիդա Գևորգի Հակոբյանի սեփականության իրավունքի ճանաչման մասին>> N 1875-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 30/10/2023 թվականի N Կ-30102023-08-0041 որոշում):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հուլիսի 27-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Հ.Սարգսյան փողոցի հարևանությամբ 170,06 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի տան և դրա կառուցման ու սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված 790,51 քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ քաղաքացի Ֆարիդա Գևորգի Հակոբյանի սեփականության իրավունքի ճանաչման մասին>> N 1875-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1) նախաբանից հանել <<հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2022JRHRHU ծածկագիրը>> թիվը և բառերը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի
2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«09» հոկտեմբերի 2023 թվականի №2820Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՊԱՐՈՆՅԱՆ ՓՈՂՈՑ, 44 (ՎԿԱՅԱԿԱՆ №12062023-08-0043) ԵՎ ՊԱՐՈՆՅԱՆ ՓՈՂՈՑ, 44/1 (ՎԿԱՅԱԿԱՆ №01082023-08-0034) ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Ռոզա Մկրտչյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №22867 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Պարոնյան փողոց, 44 (վկայական № 12062023-08-0043) և Պարոնյան փողոց, 44/1 (վկայական №01082023-08-0034) բնակելի տների միավորումից առաջացած անշարժ գույքը հասցեավորել՝

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Հ. ՊԱՐՈՆՅԱՆ ՓՈՂՈՑ, 44 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ X Վ. ԱԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«09» Դեկտեմբերի 2023 թվականի №2819.Ա

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ՏԻԳՐԱՆ ԵՆԳՈՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՍԵՎՅԱՆ ՓՈՂՈՑ, ՏՈՒՆ 30, ԲՆԱԿԱՐԱՆ 1 ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ № 11603) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Տիգրան Ենգոյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №22775 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Սեփականության իրավունքով քաղաքացի Տիգրան Ենգոյանին պատկանող Գյումրի քաղաք, Սևյան փողոց, տուն 30, բնակարան 1 հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №11603) վերահասցեավորել՝

ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Հ. Ղանդիլյան փողոց, 30/6 բնակելի տուն

Недействительная подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՍՄՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«09» Դեկտեմբերի 2023 թվականի №2818Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՇԻՐՎԱՆԶԱԴԵԻ ՓՈՂՈՑ, 87Ա ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №2490079) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Լիանա Ղրջոյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №2490079 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Շիրվանզադեի փողոց, 87ա բնակելի տուն հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №2490079) վերահասցեավորել՝

ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ա. Շիրվանզադեի փողոց, 87/1 բնակելի տուն

Недействительная подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«09» Հոկտեմբերի 2023 թվականի № 2817-Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԼԱԼԱՅԱՆ ՓՈՂՈՑ, 4/3 ՀՈՂԱՄԱՍ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №2473272) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Հովհաննես Սարգսյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №23806 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Լալայան փողոց, 4/3 հողամաս հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №2473272) վերահասցեավորել՝

ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ե. Լալայան փողոց, 2/19 հողամաս

Недействительная подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի